ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 19

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 17 -րդ հոդվածի ,14-րդ հոդվածի 6-րդ մասի ,համայքի ավագանին որոշում է՝

Հաստատել Ակունք համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 1-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը
1.«ՍՈՍ մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի «Ցերեկային խնամքի կենտրոն Կոտայքի մարզի երեխաների համար» ծրագրի ֆինանսավորման մասին
2. Համայնքային կենտրոն ստեղծելու նպատակով Զովաշեն գյուղի խանութը գնելու մասին
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 20

«ՍՈՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի ,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն «Սոս մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի «Ցերեկային խնամքի կենտրոն Կոտայքի մարզի երեխաների համար » ծրագրին համաձայն հավելվածի:
2.«Սոս մանկական գյուղեր» բարեգործական հիմնադրամի «Ցերեկային խնամքի կենտրոն Կոտայքի մարզի երեխաների համար » ծրագրի տարեկան 8 000 080 դրամը ֆինանսավորել Ակունք համայնքի բյուջեից:
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ**

Հավելված
Համայնքի ավագանու
01. 04..2019թ.թիվ 20 որոշման

SOS ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ

ՑԵՐԵԿԱՅԻՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երեխայի համար մեծանալու և դաստիարակվելու լավագույն միջավայրը ընտանիքն է և ծնողների առկայության դեպքում սոցիալ-տնտեսական պատճառները չեն կարող արդարացում կամ հիմք լինել նրանց՝ հաստատություններում տեղակալելու համար: Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Հայաստանում երեխայի խնամքի պետական հաստատություններում կա մոտ 3700 երեխա: Հարկ է նշել, որ նրանց ավելի քան 90%-ն ունի առնվազն մեկ ծնող: Սոցիալ-տնտեսական պատճառներով երեխաներին մանկատուն կամ խնամքի այլ հաստատություն ծնողները հանձնում են ժամանակավոր: Բայց նրանցից շատերը հետագայում չեն փորձում վերադարձնել իրենց երեխաներին՝ համարելով, որ լավագույն նյութական պայմանները նրանց համար արդեն ապահովված են, մինչդեռ երեխաների ինստիտուցիոնալացումը վնասում է նրանց ուղեղի զարգացմանը և կարող է երկարատև ազդեցություն ունենալ նրանց սոցիալական և հուզական վարքագծի վրա: Մինչդեռ այն երեխաների մոտ, ովքեր հաստատություններից տեղափոխվել են ընտանեկան միջավայր, նկատվում է մտավոր գործունեության և կապվածության դրսևորումների, հուզական վարքագծի և հոգեկան առողջության բարելավման միտումներ:

Հարկ է նշել, որ երեխաների համար Հայաստանում հաստատություններին տրամադրվող ֆինանսական աջակցությունը ներկայումս մեկ երեխայի համար բավականին ծախսատար է՝ տարեկան 3000- 5000 ԱՄՆ դոլար: Մինդեռ այդ գումարը կարելի է վերաբաշխվել համայնքահեն ծառայությունների և ընտանիքների ուղղակի աջակցության ուղղությամբ, և այս տեսակի աջակցությունը երկարաժամկետ առումով նվազ ծախսատար կլինի:

Հայաստանի կառավարությունը կարևոր բարեփոխումներ է ձեռնարկում, որոնք ուղղված են երեխաների իրավունքների պաշտպանությանը: Դրանց թվում են պետական հատուկ հաստատություններում երեխաների թվի նվազեցման և այդ երեխաներին իրենց ընտանիքներ վերադարձնելու, համայնքահեն ծառայությունների և այլ միջոցներով ընտանիքներին աջակցելուն ուղղված միջոցառումները: Երեխաները, ովքեր դուրս են գալիս հաստատություններից, կարող են վերադարձվել ընտանիքներ, որոնք հնարավոր է դեռևս կանգնած են այն նույն մարտահրավերների առջև, որոնց պատճառով տեղի է ունեցել երեխայի նախնական տեղափոխումը հաստատություն: Ուստի չափազանց կարևոր է համատեղել բոլոր շահագրգիռ կողմերի ջանքերը նման ընտանիքներին համապարփակ և բազմակողմանի աջակցություն ցուցաբերելու համար:

2017 թ. տվյալներով աղքատության մակարդակը Կոտայքի մարզում երկրորդն է (31,1%) Շիրակից հետո: Մանկական աղքատության մակարդակը նույն թվականին կազմել է 34.6%, որով Կոտայքը զիջում է միայն Շիրակի և Լոռու մարզերին[1]:

Ի տարբերություն Երևանի, որտեղ սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների թիվը բավականին մեծ է, Կոտայքում հազվադեպ են այն կազմակերպությունները, որոնք ծառայություններ են տրամադրում կարիքավոր ընտանիքներին և երեխաներին: Ուստի զարմանալի չէ, որ որակյալ և ժամանակին տրամադրված ծառայությունների պակասը հանգեցնում է ընտանիքի մասնատմանը, իսկ երբ ընտանիքը ի զորու չէ լուծել իր առջև ծառացած խնդիրները, ապա երեխային խնամքի հաստատություն հանձնելը ընկալում է նրա կյանքը փրկելու միակ և վերջին տարբերակը:

Հիմնվելով իրավիճակի վերլուծության և հաշվի առնելով երկրում ընթացող դեինստիտուցիոնալիզացիայի գործընթացի արդիականությունը և հրատապությունը՝ ՍՕՍ Հայաստանը 2018 թվականից Կոտայքում իրականացնում է մանկալքության կանխարգելման համապարփակ ծրագիր՝ օգտագործելով իր բոլոր ռեսուրսները և տվյալ ոլորտում ունեցած երկարամյա փորձառությունը:

2. «ՍՕՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ և ՓՈՐՁԸ

«ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամն իր գործունեությունն սկսել է 1990 թվականին՝ Կոտայքում կառուցված մանկական գյուղի դռները բացելով Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով ծնողներին կորցրած երեխաների առջև: Այն համոզմունքով, որ յուրաքանչյուր երեխա պետք է հասակ առնի ընտանիքում՝ հարգանքի, սիրո և ապահով միջավայրում, ՍՕՍ Հայաստանը կարիքի մեջ գտնվող երեխաների համար ձևավորում է ընտանիքներ և օգնում է նրանց կառուցելու իրենց ապագան:

Տարիների ընթացքում ծնողազուրկ երեխաների թիվը գյուղում աստիճանաբար նվազել է, փոխարենը զգալիորեն ավելացել է սոցիալական որբերի թիվը, որոնք գյուղում են հայտնվել տարբեր սոցիալ-տնտեսական պատճառներով: Երկար տարիներ աշխատելով մանկալքության հետևանքների մեղմացման ուղղությամբ, 2006 թվականից ՍՕՍ Հայաստանը զուգահեռաբար ձեռնարկել է մանկալքության կանխարգելման աշխատանքներ, քանի որ ավելի դյուրին է վերացնել մանկալքությանը հանգեցնող պատճառները և երեխային պահել ընտանիքում, քան աշխատել երեխային վերադարձնել ընտանիք երկար բաժանումից հետո:

---

[1] *Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2018,* Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

ՍՕՍ Հայաստանի գործունեությունը կարելի է բաժանել երկու հիմնական ուղղությունների.

1. *Մանկալքության հետևանքների մեղմացման ծրագրեր:* 3-24 տարեկան երեխաների և պատանիների համար ՍՕՍ Հայաստանն ապահովում է երկարաժամկետ խնամք երեք փուլով՝
   - Երկու մանկական գյուղ Կոտայքում և Իջևանում, որտեղ երեխաները բնակվում են ՍՕՍ ընտանիքներում մինչև 14-15 տարեկան դառնալը:
   - 2 երիտասարդական տուն Երևանում, որտեղ երեխաները տեղափոխվում են մանկական գյուղերից և ապրում են մինչև 19 տարեկանը:
   - Կիսաանկախ բնակության փուլ, երբ երիտասարդը (20-24) արդեն ունի բավարար հմտություններ ինքնուրույն կյանք վարելու համար:

*Նշում

Մանկալքությանը հանգեցնող և խոցելությանը նպաստող ռիսկային գործոններն են՝

- մշտական կացարանի բացակայությունը;
- ծնողի և/կամ երեխայի առողջական վիճակը/հաշմանդամությունը
- ընտանեկան բռնությունը
- ծնողավարման հմտությունների պակասը
- ծայրահեղ ցածր եկամուտը
- գործազրկությունը
- ծնողների շեղվող վարքը
- բազմազավակությունը
- Ոչ լրիվ ընտանիքները

2, *Մանկալքության կանխարգելման ծրագրեր:* «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամն իրականացնում է խոցելի ընտանիքների* ամրապնդմանն ուղղված ծրագիր Երևանում, Իջևանում և Կոտայքում:

Նպատակ ունենալով կանխարգելել մանկալքությունը՝ ծրագիրը այդ ընտանիքներին տրամադրում է սոցիալ-հոգեբանական, իրավաբանական, կրթական ծառայություններ, աջակցում առողջապահական խնդիրների լուծմանը, ծնողավարման հմտությունների բարելավմանը և այլն: Ուղղակիորեն մատուցվող ծառայություններին զուգահեռ, ծրագրերը մեծապես նպաստում են կարիքավոր ընտանիքների և պետական ծառայությունների միջև կապի ամրապնդմանը, ինչպես նաև տրամադրում են սոցիալական ապահովության կառույցներից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկություններ:

Կոտայքում գործող ծրագիրը բացի վերը նշված ծառայություններից ունի նաև.

- Ճգնաժամային կացարան կանանց և երեխաների համար
- Կարճաժամկետ խնամքի կենտրոն 3-14 տարեկան երեխաների համար

Մինչև 2018 թվականի ավարտը մանկական գյուղում գործում էր նաև ցերեկային խնամքի կենտրոն նախադպրոցական տարիքի երեխաների համար, ինչը ոչ միայն նպաստում էր երեխայի զարգացմանը, այլ նաև ծնողների ծնողավարման

հմտությունների բարելավմանը և նրանց զբաղվածության ապահովմանը: 2019-ին ֆինանսավորման դադարեցման պատճառով դադարեցվել է նաև խնամքի կենտրոնի գործունեությունը:

3. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Նպատակը

Նպաստել մանկալքության կանխարգելմանը և աջակցել երկրում ընթացող ապաինստիտուցիոնալիզացիայի գործընթացին՝ Կոտայքի ՍՕՍ մանկական գյուղում ցերեկային խնամքի կենտրոնի գործունեության միջոցով:

3.2. Խնդիրները

- **Բարձրացնել երեխաների ընդհանուր զարգացածության մակարդակը:** Երեխաների համար կկազմակերպվեն տարբեր դասընթացներ, այդ թվում՝ մայրենի լեզու, անգլերեն, ռուսերեն, մաթեմատիկա և այլն: Տարբեր զարգացման խաղերի միջոցով կխթանվեն նրանց պատկերավոր և տրամաբանական մտածողությունը, արտահայտվելու կարողությունները:
- **Բարելավվել երեխաների հուզական վիճակը:** Հոգեբանի և սոցիալական աշխատողի կողմից անհատական աշխատանքներ կտարվեն երեխաների հետ՝ նրանց հուզական դաշտը կայունացնելու և սթրեսները մեղմելու նպատակով:
- **Բարելավվել երիտասարդ ծնողների ծնողավարման հմտությունները:** Փորձառու մանկավարժի կողմից աջակցություն կտրամադրվի երիտասարդ ծնողներին՝ ճանաչելու երեխայի ներաշխարհը, բացահայտելու երեխա-ծնող խնդիրները և համատեղ գտնելու լուծման ճանապարհներ:

3.3. Թիրախային խումբը

Ծրագիրն ուղղված է Կոտայքի մարզի Կոտայք համայնքի և ինչպես նաև ՍՕՍ մանկական գյուղի շահառու 3-6 տարեկան 65-70 խոցելի երեխաներին և նրանց ընտանիքներին: Կոտայք համայնքի երեխաների թիվը մոտավորապես 40-ն է: Մյուս 25-30 երեխաները ՍՕՍ մանկական գյուղի ինչպես նաև Ընտանիքների ամրապնդման ծրագրի շահառուների երեխաներ են տարբեր համայնքներից:

Երեխաների ընտրության ժամանակ առավելությունը կտրվի հետևյալ ընտանիքների երեխաներին՝

1. Ոչ լրիվ ընտանիքներ (ամուսնալուծված կանայք, միայնակ մայրեր և այլն)
2. Բազմազավակ ընտանիքներ
3. Հաշմանդամ անդամ ունեցող ընտանիքներ
4. Ծայրահեղ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներ

3.4. Ծրագրի իրականացումը

Հիմքում ունենալով երեխայակենտրոն գործունեության սկզբունքը՝ կենտրոնը կաշխատի նախադպրոցական տարիքի երեխաների սոցիալական և զգայական զարգացման, մտածելու կարողության և ընդհանուր գիտելիքների բարձրացման ուղղությամբ:

Ցերեկային խնամքի և զարգացման կենտրոնում կգործի երեք խումբ՝ յուրաքանչյուրում 22-23 երեխա: Կենտրոնի աշխատանքները կսկսեն 10:00 և կավարտվեն 16:00: Օրական մեկ անգամ երեխաներին կտրվի թեթև սնունդ և թեյ/հյութ:

Կենտրոնի գործունեության համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան, զարգացման խաղերը և դասընթացների նյութերը կտրամադրվեն «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից: Կազմակերպությունը կհոգա նաև կոմունալ ծառայությունների համար պահանջվող ծախսերը, հոգեբանի, սոցիալական աշխատողի և ավագ մանկավարժի վճարները:

3.5. Ծրագրի ազդեցությունը

Ծրագիրը՝

- **կնպաստի վաղ մանկության զարգացմանը:** Նախադպրոցական կրթությունը լավ հարթակ է բացահայտելու և զարգացնելու երեխաների բնավորության դրական կողմերը, ինչպես նաև կանխելու նրանց բացասական վարքը: Տարբեր արժեքներ ունեցող, տարբեր ընտանիքներից եկած երեխաները ընկերներ են գտնում և սովորում են օգնել միմյանց տարբեր իրավիճակներում: Հասակակիցների հետ շփումը դրական է ազդում երեխայի բնավորության ձևավորման վրա:
- **կբարձրացնի դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակը:** Դպրոցը երեխայի համար կյանքի նոր փուլ է, ուստի շատ կարևոր է նրան պատրաստել ուսուցման գործընթացին: Սովորաբար, և՛ գիտելիքներով, և՛ կարգապահությամբ նախադպրոցական հաստատություններ/զարգացման կենտրոններ հաճախած երեխաներն ավելի պատրաստված են լինում դպրոցին, քան այն երեխաները, ովքեր չեն ստացել նախադպրոցական կրթություն:
- **կբարելավվի երեխայի ընտանիքի կենսամակարդակը:** Կենտրոնի գործունեությունը հնարավորություն կտա մանկահասակ երեխաներ ունեցող կանանց աշխատանք գտնել կամ ապահովել ինքնազբաղվածությամբ: Այսպիսով, կավելանա նրանց ընտանեկան եկամուտը և կբարելավվեն ընտանիքի կենսապայմանները:
- **կնպաստի ծնողավարման հմտությունների բարելավմանը:** Ծնողները՝ հատկապես երիտասարդ ծնողները, հաճախ ունենում են ծնողավարման փորձի պակաս, ինչը բացասաբար է անդրադառնում երեխայի՝ տարբեր երևույթների վերաբերյալ ձևավորված վերաբերմունքի, ինչպես նաև ծնող-երեխա փոխհարաբերությունների վրա: Շփումը այլ ծնողների հետ, ինչպես նաև

պարբերական հանդիպումներն ու քննարկումները փորձառու մանկավարժների ու հոգեբանի հետ, կօգնի երիտասարդ ծնողներին հաղթահարել առկա դժվարությունները և տարբեր իրավիճակներում երեխայի հանդեպ համապատասխան մոտեցում ցուցաբերել:

4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵ

1.	Ծախսերի նկարագրություն	Միավոր	Քանակ	Գումար	Ակունքի համանքա պետարան	ՍՕՍ մանկական գյուղեր
	Աշխատավարձ				**5 350 080**	**9 245 676**
1.1.	Ավագ մանկավարժ	ամիս	12	286 369		3 436 428
1.2.	Դաստիարակ (2*88920)	ամիս	12	177 840	2 134 080	
1.3.	Դայակ (3*76 000)	ամիս	12	228 000	2 736 000	
1.4.	Երաժշտության մասն. (1)	ամիս	12	40 000	480 000	
1.5.	Հոգեբան (1)	ամիս	12	276 142		3 313 704
1.6.	Սոցիալական աշխ. (1)	ամիս	12	207 962		2 495 544
2.	**Մնունդ**			**4 200 000**	**2 100 000**	**2 100 000**
2.1.	Երեխա (70*5000)	ամիս	12	4 200 000	2 650 000	1 550 000
3.	**Կոմունալ ծախսեր (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)**					**3 246 120**
4.	**Այլ ծախսեր**					**1 435 000**
4.1.	Պահպանման ծախսեր					935 000
4.2.	Մարող միջոցներ					500 000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**8 000 080**	**15 476 796**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 21

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԶՈՎԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԽԱՆՈՒԹԸ ԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքային կենտրոն ստեղծելու նպատակով 2 միլիոն դրամով գնել Ակունք համայնքի Զովաշեն գյուղի խանութը :
Համայնքի ավագանու անդամներ

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՂՎԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՍԱՄՍՈՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ՏԻԳՐԱՆՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ.ՌՈՒԲԵՆՅԱՆ